

ՂԱՐԱԲԱՂ...

ՍՓԻՒՌԸ ԶՕՐԱՎԻԳ

ՀԱՅՐԵՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Երեւանի, Լենինականի, ինչպէս նաեւ Ղարաբաղի մէջ տեղի ունեցող ցոյցերուն զօրավիգ եւ փառալեր հանդիսացան սփիւռփ տասնեակ գաղութներու մէջ ապրող հայ զանգուածները:

Սփիւռփահայութիւնը արդէն իսկ տեղեակ էր Ղարաբաղը Հայաստանին վերամիացնելու գծով տարուող աշխատանքներուն: ԿՈՋՆԱԿԻ առաջին թիւին մէջ, անդրադարձած էինք Արէլ Աղանքէկեանի Լոնտոն այցելութեան եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան կազմակերպած ընդունելութեան ընթացքին, անոր ունեցած ելոյթին, ուր խորհրդային մեծ տնտեսագէտը Ղարաբաղը Հայաստանին վերամիացնելը արդարացի ու գործնական կը գտնէր՝ պատմական եւ տնտեսական պատճառներով:

Անցնող շաբթուայ ընթացքին, եւրոպական եւ ամերիկեան բազմաթիւ ֆաղափներուն մէջ սփիւռփահայ կազմակերպութիւններ եւ հասարակական դէմքեր յուշագրերով, նամակներով, հեռագրերով դիմեցին Կորպաչովին, որպէսզի արդար լուծում գտնէ հայ ժողովուրդի պահանջին: Փարիզի, Լոնտոնի, Լոս Անճելըսի, Սան Ֆրանսիսկոյի եւ այլ բազմաթիւ ֆաղափներու մէջ դիմումներ եղան նաեւ Սովետական դեսպանատուներուն ու հիւպատոսարաններուն, որպէսզի սփիւռփահայութեան պահանջը փոխանցուի Մոսկուա:

Լոնտոնի ամենազդեցիկ թերթերու՝ Թայմզի, Ինտիփէնտընթի, Կարտիընի եւ միւս բոլոր թերթերու առաջին էջերը գրաւեցին Հայաստանի եւ Ղարաբաղի մէջ տեղի ունեցող ցոյցերը: Թերթերը միեւնոյն ժամանակ յօդուածներ գրեցին հայ ժողովուրդի, անոր պատմութեան ու ներկայի մասին: Բրիտանացի ընթերցողները այժմ բաւարար պատկերացում ունին հայութեան վերաբերեալ:

Կիրակի 27 Փետրուարի առաւօտեան, Լոնտոնի հեռատեսիլ 4րդ ալիքը կէսժամեայ հաղորդում սփռեց Հայաստանի եւ Ղարաբաղի մասին: Անգլիացի Քրիստոֆըր Վոքըր, որը մօտէն ծանօթ է հայ ժողովուրդի անցեալին, յատկապէս անոր վերջին մէկդարեայ պատմութեան, 4րդ ալիքէն կատարեց ճիշդ վերլուծութիւններ: Քրիստոֆըր Վոքըրին կ'ընկերանար սովետական ՆՈՎՈՍՏԻ հեռագրական գործակալութեան մէկ լրագրողը: Հեռատեսիլի հաղորդումէն պարզուեցաւ, որ Հայաստանի մէջ տեղի ունեցող ցոյցերը ոչ թէ հակապետական են, այլ ԿԼԱՍՆՈՍՏԻ ընձեռած ազատութեան երթեր, իրաւունքներ պահանջելու համար: Նոյն Կիրակի օր, ժամը 13,15ին B.B.C.ի Ռատիօ 4 ալիքը Ռեփորթած կատարեց Լոնտոնի Ս. Սարգիս եկեղեցիէն, հատուածներ հաղորդելով պատարագէն՝ ուղղակի: Ապա եկեղեցիէն դուրս եկող ժողովուրդին՝ ռատիօի թղթակիցը հարցումներ կատարեց Ղարաբաղի մասին եւ ստացաւ անհրաժեշտ պատասխաններ: Թղթակիցի հարցումներուն աւելի երկար ու հանգամանալից պատասխանեց լոնտոնահայ ազգային դէմքերէն՝ Պր. Զորճ Բիւրճեան: Ան Ղարաբաղը Հայաստանին միացուիլը գտաւ

ՂԱՐԱԲԱՂ...

ՃԱՐ. ԷԶ 2

արդարացի: Բրիտանահայոց Առաջնորդ
Եղիշէ Եպիսկոպոս Կիզիրեան եկեղեց-
ւոյ մէջ աղօթեց հայ ազգին համար եւ
խաղաղ ու երջանիկ օրեր մաղթեց
Հայաստանին: